№ 262 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 26 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1915

ՔԱՌԱՍՈՒՆԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 26 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 262

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը
7 ամսվանը 6 րուբլի։
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը։
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67

BIBLIOTHÈQUE ARMÉNIENNE
VENISE - St LAZARE

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
ԱՌԱՋԻԿԱՅ 1916 Թ. ՀԱՄԱՐ
(45-ՐԴ ՏԱՐԻ)
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է՝

12 և 11 ամիսը	10 ամիսը	9 ամիսը	8 ամիսը	7 և 6 ամիսը	Այնուհետեւ ամսական ՄԷԿ րուբլի։
10 րուբ.	9 րուբ.	8 րուբ.	7 րուբ.	6 րուբ.	

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 12 րուբլի։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պէտիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կոպէկ։

Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կոպ. նամականիշ։

Հին բաժանորդներին խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Հինգշաբթի, նոյեմբերի 26-ին
Կ. ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳ. ԸՆԿ. ԽՈՐՀՈՒՐԴԸ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է
Ներկայացում համերգային բաժնով
ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՒ ՈՐԲԵՐԻ
օգտին
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
կը ներկայացնէ
ԲԱՐԵԿԱՄՆԵՐ
Դրամա 3 արարուածով, Բօվէսուրի, թարգ. Ե. Աբէլեանի
Վերջը
ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԲԱԺԻՆ
Մասնակցութեամբ կայսերական թատրոնների նախկին երգիչ Բ. ԱՄԻՐՋԱՆԻ, Տ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ և այլոց։
Սկիզբն է երեկ. ժամը 8-ին.
Տեղերի գները 5 ր. մինչև 1 ր.։ Մուտքի տոմսակները 60 կ.։
Ռեժիսոր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ
Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ Երևանեան հրապարակում «Կաֆէ-Ցենտրալ»-ում և կլուբի շվէյցարի մօտ։
տռ. 848. 2—1

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ
ԵՒ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
ԿԵՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ
Պլոմբ—ոսկուց, արծաթից, ֆարֆօրից և այլն։ Ատամի հեռացումն առանց ցաւի։ Արհեստական ատամներ ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված միթօդով։
Ընդուն. 10—2 առաւ. 4—7 երեկ. Լերմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պէլէուկից։
(ա. օ.) տռ. 515. 100—80

Բեռլինի համալսարանի
ԲԺԻՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱՒՈՐՆԻ և սրտի. բժշկութիւն նաև բաղնի ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական Պ ՆԵՎՄՕԹՕՐԱՔՍՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌԵՆՏԳԵՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան։ 2ՇԱԲԹԻ ԿԻՐԱԿԻՆ առ. ժ. 9—10 ՁՐԻ։ Бебутовская, 23. тел. 7—29.
տռ. (ա. օ.) 504. 100—97

Թիֆլիսի կոյրերի հոգաբարձութեան Ականաբուժարանի աւագ օրդինատոր
ԲԺՇԿՈՒՀԻ
ՍՕՖԻԱ ՄԻՐԶՕՅԵԱՆ
ընդունում է աչքի հիւանդութիւններից ամեն օր՝ ցեր. ժամը 1½-ից մինչև ժամը 3-ը։ Սերգիեվսկայա փող. № 1. Տելեֆոն № 16—67.
տռ. 753. 50—31

ԲԺԻՇԿ
ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
Վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը՝ ժամանակաւորապէս կոկորդի, քթի, ականջի հիւանդութիւններով։
Առաւօտեան ժամը 10—12-ը
Երեկոյեան » 5—7 ը
Бебутовская ул. № 26 3 [illegible]
[illegible]
տռ. 779. 50—25

Կիրակի, նոյեմբերի 29-ին առաւօտեան
„ԱՊՈԼԼՕ" ԹԱՏԵՐԱՍՐԱՀՈՒՄ
(Անկլիւն Միքայէլեան և Պիրագովեան փ.)
ՆՈՒԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ
Հրատարակչական Ընկերութիւնը
կազմակերպում է
ՄԱՆԿԱԿԱՆ
ՍԻՆԷՄԱՏՕԳՐԱՖ
Բազմազան ծրագրով.
I սէանսն սկսվում է ժ. 12-ին, II սէանսը՝ ժամը 1½-ին։
Տոմսակների գներն են՝ 15, 20, 30, 40 և 50 կոպէկ։
Տոմսակները կարելի է ստանալ «Հասկերի» խմբագրատանը՝ Սերգիեվսկայա փ. № 20 և հանդէսի օրը՝ «Ապոլլօյի» կասսայում։
տռ. 853. 3—1

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչևսկայա 13, տելէֆօն 4—21.
Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժական կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով։
Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.։
Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Ցարութիւնեան
Ն. Ն. Վեսելօվզօրով
Լ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Ն. Ն. Տէր-Ներսէսեան
Լ. Ր. Փիշէր
Մ. Պ. Շահպարոնեանց
(հ. կ.) տռ 742. 100—13

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նարաբեան
(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան)
Վերադառնալով հանքային ջրերից՝ վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը։
Ընդունում է ամեն օր՝ (առ. ժ. 1—2. (եր. ժ. 4—6.
Հասցէն՝ Սօլոլակ, Բարիշչևսկայա փ. № 1. Հեռախօս 10—58.
(Ն.Հ.Կ.) տռ. 634. 100—32

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Յօգուտ «Մշակի» ֆոնդի
հետեւեալ գրքերը.
1) «ՄՇԱԿԸ» ԵՒ ՀԱՅ ԿԻՆԸ գ. 1 ր.
2) ՀԱՄԱԼԻ ՄԱՍԻԱՀԱԹՆԻՐԸ » — 30 կ.
3) ԿԱՑԷՆԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ, դրամա 5 գ. Ա. Առաքելեանի » — 50 կ.
4) ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿ «ՄՇԱԿԻ» («Մշակի» յօբելեանի առթիւ «Տարազի» հրատարակած ալբոմ) 1 ր.
5) ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I 1 ր.
Վերոյիշեալ հրատարակութիւններից մի մի օրինակ պահանջողները ճանապարհածախս չեն վճարում։
2. 0—3

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԻ ՄԵԿՆՈՒՄԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
24 նոյեմբ.

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։

Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրը այսօր բարեհաճեց մեկնել Ցարսկոյէ Սելօյից գործող բանակը։

Նորին Մեծութեան հետ մեկնեց Գահաժառանգ Արքայազնը։

Ստորագրեց՝ Կայսերական Պալատի մինիստր գեներ.-ադիւտ. կոմս Ֆրեդերիքս։

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱՐԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
23 նոյեմբերի

ՊԱՐԻԶ.—Հաղորդագրութիւն Դարդանելում տեղի ունեցող ռազմի գործողութիւնների մասին.

Նոյեմբերի 21-ին երկուստեք շարունակվեց չափազանց ուժեղ կրակ, ըստ որում մեր հրետանիները ռմբակոծեցին թշնամու բանուորների մի խումբ Կերիվեսդերէ շրջանում։

Մեր աէրօպլանները մի քանի ռումբեր նետեցին Թիւրքերի զօրադիրքերի վրա։

ԼՈՆԴՈՆ.—Ծովակալութիւնը յայտնում է.

Անգլիական մի սուզանաւ Մարմարա ծովում նոյեմբերի 19-ին ռմբակոծեց Իզմիդի երկաթուղու գնացքը և լուրջ վնասներ պատճառեց նրան։ Նոյեմբերի 20-ին այդ սուզանաւը ջրասուզեց ականով թիւրքական «Եարհիսար» հակաականաւը Իզմիդի ծոցի մուտքի մօտ և գերեց նրա վրա գտնվող երկու օֆիցերի և 40 նաւաստիների։ Նոյեմբերի 21-ին սուզանաւը ընկղմեց մի բեռնատար շոգենաւ Պանդէրմայի մօտ և, վերջապէս, ոչնչացրեց թնդանօթային կրակով 4 առագաստանաւ ռազմանիւթով բեռնված։

Հնդկաստանի գործերի ստատս-սեկրետարը յայտնում է, որ գեներալ Տաունսէնդի զօրաբաժինը առանց նոր ընդհարումների հասել է Կուտալամարային։

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Կովկասեան զօրաճակատ։ Սեաւ ծովի մօտից մինչև Վանի լճի հարաւային ափը՝ մեր հետախոյզների աջող գործողութիւններ են։

Խորասանից դէպի հարաւ, Արաքս գետի մօտ, մի քանի լեռնավայրերում բուք ու բորանից յետոյ ձեան հաստութիւնը հասնում է 8 արշինի։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՌԱԶՄԱՐԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
23 նոյեմբերի

ՍՕԼՈՒՆ.—Նոյեմբ. 21-ին բուլղարներն ուժեղ, բայց անհետեւանք ռմբակոծութեան ենթարկեցին անգլիական զօրքի ձախ զօրաթեւը։

Ցրնայի ձախ ափին բուլղարների թոյլ յարձակումը ֆրանսիացիք վանեցին։ Բուլղարները փորձեցին գիշերային յարձակում գործել Կաստուրինոյի վրա, բայց վանվեցին հրացանային կրակով։

Սերբերը շարունակեցին իրանց նահանջը, չը հետապնդվելով բուլղարներից հաւանօրէն այն պատճառով, որ բուլղարները շատ յոգնել են։

Տեղս են գալիս մեծ թւով սերբ փախըստականներ։

ԱԹԷՆՔ.—Քաղաքական դրութիւնը մնում է անփոփոխ։

Ճշգվում է այն տեղեկութիւնը, որ համարեա բոլոր սերբ զօրքերին աջողվել է նահանջել դէպի Ալբանիա։ Գնդապետ Վասիչի զօրքը Մօնաստիրից հեռանալուց յետոյ ամբողջովին եկել է Րէսնա։

Բուլղարները և թիւրքերը կենտրոնանում են Թրակիայի ծովափին, նախատեսելով որ դաշնակիցները զօրք են ափ հանելու։

Գերմանացիք զբաղված են ուղղակի երկաթուղային և հեռագրական հաղորդակցութիւն Բերլինի և Կ. Պոլսի միջև հաստատելով։

ՑԵՏԻՆԻԷ.—Պաշտօնական հաղորդագրութիւն.

Թշնամին նոյեմբ. 21-ին համառ յարձակում գործեց մեր դիրքերի դէմ Չէխոտենա գետի ձախ ափին, բայց յարձակումը մենք վանեցինք, վերցնելով գերիներ։ Ճիշդ նոյն կերպ մենք վանեցինք թշնամու յարձակումները Բրոդարեվի, Սէնիցի և Բելօպոլի ուղղութեամբ։ Թշնամին կրեց ծանր կորուստներ։

ԵՒՐՕՊԱԿԱՆ ՌԱԶՄԱՐԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
24 նոյեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Կրէվօ գիւղի շրջանում, Վիլի գետից դէպի հարաւ մենք ցած իջեցրինք թշնամու մի աէրօպլան։ Օդագնացները գերի ընկան։

Եանովկա գիւղի մօտ թշնամին փորձեց ուժեղ թնդանօթային կրակի պաշտպանութեան տակ առաջանալ դէպի արևելք, բայց վանվեց դէպի Պելէվա գիւղը։ Նոյնպէս անաջող անցան թշնամու ջանքերը յարձակում գործելու Եալօվէց գիւղի շրջանում մեր զօրքերի վրա։

Սվինտէն լճից դէպի արեւմուտք, նաև Վիշէ գետից դէպի հարաւ, Տարնօպոլից դէպի հիւսիս-արեւմուտք մեր հետախոյզները գործում են աջողութեամբ։

ՀՌՕՄ.—Գլխաւոր բանակից տեղեկացնում են.

Չը նայած վատ եղանակին, ամբողջ զօրաճակատի վրա թնդանօթաձգութիւն էր։ Թշնամու հրետանիները ռմբակոծեցին Պուսալօն և Մօնֆալկօնէն, պատճառելով որոշ վնասներ։ Թշնամու զօրամասերը մի քանի տեղում փորձեցին միութեան մէջ ճեղքել մեր զօրագիծը, բայց ամենուրեք ետ մղվեցին։ Մենք որոշ աջողութիւն ունեցանք Կարսօյում։

ԼՈՆԴՈՆ. — Ֆելդմարշալ Ֆրէնչը տեղեկացնում է.

Մենք կատարեցինք աջող օդային յարձակումներ և ռմբակոծութիւններ։

Նոյեմբերի 21-ին և 22-ին մեր թնդանօթային կրակը տեղ-տեղ ոչնչացրեց թշնամու խրամները։ Երկուստեք ականային կռիւը շարունակվում է։ Թշնամու ականից մեր խրամատները 25 կարդ. տարածութեամբ աւերվեցին։

ՊԱՐԻԶ. — Պաշտօնական հաղորդագրութիւն.

Երէկ տեղի էր ունենում բաւականին ուժեղ թնդանօթաձգութիւն Արտուայում Լօօսի և Սուշէի շրջակայքում, նաև Սոմմայի և Ուազի միջև։ Բաւական ուժեղ թնդանօթաձգութիւն տեղի էր ունենում Շամպանիում և Արգօններում։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
24 նոյեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պետական Խորհրդի նստաշրջանը յետաձգելու առթիւ հրատարակվեց Բարձրագոյն ռեսկրիպտ յանուն Խորհրդի նախագահ ստատս-սեկրետար Ա. Ն. Կուլոմզինի։

Երէկ քաղաքային դումայի մեծ դահլիճում կայացաւ «անգլիական դրօշակի» ընկերութեան հրապարակային ժողովը։ Դահլիճը լիքն էր բոլոր հասարակական դասակարգերի ներկայացուցիչներով և բրիտանական գաղութի անդամներով։ Ժողովը բացեց Պետական Խորհրդի անդամ Կովալեվսկին. ճառեր արտասանեցին Պետական Դումայի անդամներ Միլիւկովը և Րօդիչեվը, պրոֆեսորներ՝ Տուգան-Բարանովսկին և Տարլէն։ Մակսիմ Կովալեվսկին մանրամասն բնորոշեց այն նշանակութիւնը, որ ունի Մեծ-Բրիտանիայի մասնակցութիւնը ներկայ պատերազմի մէջ, կանգ առնելով Անգլիայի քաղաքական կազմի զարգացման ու պատմութեան և դիւանագիտական յարաբերութիւնների վրա, որոնք նրան միացրին հինգ մեծ պետութիւնների այժմեան դաշնակցութեան։

Պետական Դումայի նախագահը մեկնեց Ցարսկօէ Սէլօ և բարդ. ունեցաւ ընդունվել Թագաւոր Կայսրից։ Բարձրագոյն ունկնդրութիւնը տեւեց 50 րոպէ և կրում էր ամենաողորմած բնոյթ։

ՀՌՕՄ.—Լրագիրները աւելի մեծ անվստահութիւն են յայտնում Յունաստանին։

ԼՈՆԴՈՆ. Համայնքների պալատում Ասկվիթը յայտնեց, որ ռազմի գործողութիւններն աւելի համակերպելու հարցը վճռված է վերջնականապէս Ֆրանսիայի վերաբերութեամբ։ Այժմ այդպիսի հարց քննվում է միւս դաշնակիցների հետ։ Ասկվիթը նկատեց, որ անտեղի կը լինէր յայտնել համաձայնութիւնների մանրամասնութիւնները, որովհետև նրանք կարող են օգտակար լինել թշնամուն։

ԹԷՀՐԱՆ.—Կում փախած պատգամաւորները վերադառնում են Թէհրան։ Մի քանիսը նրանցից աճապարում են իրանց ներկայութեամբ արգելք լինել Պարսկաստանի համաձայնութեանը Ռուսաստանի և Անգլիայի հետ, յայտարարելով կաբինետն անկարող կնքելու պայմանագիր առանց մէջլիսի հաւանութեան։ Ասենք՝ վերադարձողների մէջ քիչ չեն այնպիսիները, որոնք հիասթափվել են Կումի բուտաֆորային կոմիտէտից, որի մէջ տիրում է տարաձայնութիւն, ինքնիշխանութիւն ու դաւեր։

ԼՈՆԴՈՆ.—Նոր Հարաւային Ուէլսի կառավարութիւնը 8000 ֆունտ ստերլինգ նուիրեց յօգուտ Վիվէի՝ լեհերին օգնող ֆոնդի և 1,500 ֆունտ ստերլինգ՝ յօգուտ Լեհաստանի ազգաբնակութեանն օգնող կենտրոնական կոմիտէտի։

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—«Դնէվնիկը» յայտնում է, որ հազարաւոր գերմանացի և աւստրիացի բանուորներ գնում են դէպի Կ. Պոլիս, իսկ այնտեղից Ասիայի ներքին մասերը, ուր նրանց տրվում է շատ աշխատանք։

Լրագրական յօդուածներից երևում է, որ Բուլղարիայում տիրում է լիակատար անիշխանութիւն, տէրրօր. դրութեան տէրերը գերմանացիներն են, ամենուրեք պաշտօնեաները նրանցից են, վխտում են գերմանական գործակալներ և այլն։

ԱԹԷՆՔ.—Յունաց գլխաւոր շտաբի օֆիցերներ Պալլիսը և Ստանկօսը մեկնեցին Սօլուն՝ մշակելու համար տեխնիքական միջոցներ, վերաբերեալ դաշնակից զօրքերի Մակեդօնիայում մնալուն։ Այդպիսով կարելի է կարծել, որ Յունաստանի վերաբերմունքը դէպի դաշնակից զօրքերը լուծվելու է նպաստաւոր կերպով։

ՊԱՐԻԶ.—Բրիանը նախաճաշ տուեց ի պատիւ այն օտարազգի գեներալների, որոնք մասնակցեցին գլխաւոր բանակում տեղի ունեցած խորհրդակցութիւններին։ Ներկայ էին անգլիական, իտալական և ռուսական, սերբիական և բելգիական դեսպանները, եապօնական հաւատարմատարը, գեներալներ Ժիլինսկին և Պորրօն, գեներալ Գալիէնին, ծովակալ Լակազը, գեներալիսիմուս Ժօֆֆրը և Կամբօնը։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)
23 նոյեմբ.

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Ներքին գործերի մինիստրութեան կառավարիչն ամենաողորմածաբար հրամայված է լինել ներքին գործերի մինիստր։

Անդրիաշեվին ամենաողորմածաբար հրամայված է լինել մամուլի գործերի գլխաւոր վարչութեան անդամ։

ՏՕԿԻՕ.—Պարլամենտում արտասանած իր ճառի մէջ մինիստր-նախագահը ընդգծեց, որ Եապօնիայի յարաբերութիւնները սերտ են համաձայնութեան պետութիւնների հետ, և մատնանշեց, որ անհրաժեշտ է աւելացնել ծովային ուժերը, որպիսի նպատակով բիւջէի մէջ մուծված են համապատասխան գումարյատկացումներ։ Պրեմիէրը ասաց, որ Եապօնիայի տնտեսական դրութիւնը բարելավվել է պատերազմական դէպքերի շնորհիւ։ Արտաքին գործերի մինիստրը բացատրութիւններ տուեց այն բանակցութիւնների մասին, որ վարում է Եապօնիան Չինաստանի հետ միապետութեան վերականգնումը յետաձգելու մասին։ Մինիստրը յայտնեց նմանապէս, որ Եապօնիան պարտաւորվել է քառեակ համաձայնութեան պետութիւնների հետ միասին՝ չը կնքել անջատ հաշտութիւն Գերմանիայի հետ։

ՊԷԿԻՆ.—Շանխայից հաղորդում են, որ ապստամբների ռազմանաւը բռնվել է, յեղափոխականների մեծ մասը գնդակահարվել է։ Քաղաքում տեղի են ունենում առանձին տէրրօրիստական ակտեր։ Կատարվում են բազմաթիւ ձերբակալութիւններ։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Ցարսկօէ Սէլօյի պալատում Թագաւոր Կայսրին բարդ. ունեցաւ ներկայանալ ֆրանսիացի սենատոր Պօլ Դումէրգը։

ՎԱՇԻՆԳՏՕՆ.—Բացվեց կոնգրէսը։ Բիւջէի գումարն է 1.285.855,000 դոլլար. անցեալ տարվանից 170 միլ. դոլլարով աւելի։ Յաւելումը ծովային և զինուորական ռազմի պատրաստութիւնների համար է։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Մոսկվայի լրագիրներում տպված է. «Պարսից կառավարութիւնը, ըստ երևոյթին, չի համաձայնի կնքել արշաւողական դաշինք: Դաշնակից դիպլոմատները «արշաւողական և պաշտպանողական դաշինք» ասելով չեն հասկանում այն, որ Պարսկաստանը իսկոյն պատերազմ յայտարարէ Թիւրքիային, այլ օրինական կռիւ յայտարարէ այն աւազակախմբերի դէմ, որոնց կազմակերպել են մեր թշնամիները Պարսկաստանում, նաև հեռացնէ թիւրք-գերմանական գործակալներին և կուսղ պետութիւնների պաշտօնական ներկայացուցիչներին: Կումի մէջ գործող ազգային կոմիտէը և դաշնակից դիպլոմատները նոյնպէս համարվում են խռովարկու մարմին: Պարզվեց, որ պարսից կառավարութիւնը համաձայն չէ արտաքսել Պարսկաստանից Աւստրո-Գերմանիայի և Յունաստանի դեսպաններին: Թիւրքաց դեսպանը յայտնում է, որ եթէ պարսից կառավարութիւնը համաձայնութիւն կապէ Անգլիայի և Ռուսաստանի հետ, թիւրքերը և գերմանացիք այդ համաձայնութիւնը չեն ճանաչի, կը մեկնեն Թեհրանից, բայց չեն հեռանայ Պարսկաստանից, այլ կը սկսեն օգնել Կումի ազգային կոմիտէին մեր դէմ կռուելու համար»:

◆ «Р. Сл.»-ն հաղորդում է, որ Համադանի և Սուլթանաբադի ազգային կոմիտէները գրաւել են անգլիական բանկից մօտ կէս միլիոն:

◆ Կոպենհագենից հեռագրում են «Р. В.»-ին. «Բերլինում պնդում են, որ քառեակ համաձայնութեան պետութիւնները պահանջել են Յունաստանից ամրացնել Խալկիդոնի թերակղզին, իրականացնել ծովային ոստիկանութեան ֆունկցիաները յունական նաւահանգիստներում, հսկել պօստի և հեռագրի վրա և նշանակել գրաքննիչներ»:

◆ Մալտայից հաղորդում են, որ Կահիրէում յայտնագործվել է դաւադրութիւն, որի նպատակն է եղել տապալել խեդիվին և նրա մինիստրներին և ապստամբութիւն առաջ բերել Եգիպտոսում: Հրահանգներ ապստամբները ստանալիս են եղել Բերլինից: Գերմանացիք եռանդով գործում են Սուէզի ջրանցքի մօտ, բաժանելով զէնք արաբներին և կոչելով նրանց սրբազան պատերազմի:

◆ Ռումինիան վերջնագիր է ներկայացնելու Աւստրիային այն ժամանակ, երբ դաշնակից զօրքերի թիւը Բալկաններում հասնէ կէս միլիոնի:

◆ Վաշինգտոնում ոմն Կրեզլէ՝ փորձելիս է եղել մրգերի անուան տակ պայթուցիկ նիւթեր ուղարկել Ռուսաստան:

◆ Նիշում արիւնահեղ ընդհարումներ են եղել բուլղարների և ունգարների միջև:

◆ Իտալացիք Ալբանիայում զօրքեր են ափ հանում և զէնք են ուղարկում սերբերի համար:

◆ Պետրոգրադից հեռագրում են, որ աւստրիական և թիւրքական դեսպանների Թեհրան վերադառնալը չը պէտք է ընդունել իբրև նշան այն բանի, որ մեր դրութիւնը վատթարացել է: Բայց և այնպէս ռուս-պարսկական յարաբերութիւնները մնում են շատ անորոշ:

◆ Քառեակ համաձայնութիւնը նոր վերջնագիր ներկայացնելով Յունաստանին, պատուիրել է իր նաւատորմին պատրաստ լինել պաշարումը վերսկսելու համար:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի ԿԻՐԱԿԻՆ

Հայոց վրայ ի գործ դրուած խժդժութիւնները քննող յանձնախումբին (էթրօսիթիզ քամիթի) և քրիստոնեայ եկեղեցիներու փէտրըլ քաունսել կոչուած մարմինին կողմէն Միացեալ Պետութեանց 1,00,000 եկեղեցիներուն մասնաւոր դիմում եղած է, որ նոյեմբեր 14-ի կիրակին, պաշտամունքի առեն, ամեն եկեղեցի աղօթք մատուցանէ տառապող հայերուն համար, և այդ առաւօտեան հանգանակութիւնը յատկացնէ հայ կարօտեալներուն: («Կոչնակ»)

ՄՈՒՇԻ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԿՈՏՈՐԱԾԸ

Մուշի ս. Կարապետի վանքի շրջակայքում գտնված 20 հայաբնակ գիւղերից, որ կազմում են Սահակեան կոչված շրջանը, ներկայ կոտորածից ազատվել և Կովկաս են փախել միայն 4 հոգի, որոնցից մէկը Մովսէս Տօնապետեանն է, Գոմս գիւղից: Սա եղել է Ռուբէն Տէր-Մինասեան խմբապետի զինուորը, 38 տարեկան մի բարձրահասակ, կորովի անձ, որ քաջաբար մասնակցել է Գոմսի, Սասունի, Բախչիսարի, Սերգի լեռան և այլ կռիւներում, կորցրել է իր կնոջը, 4 որդոցը, և եղբօրը իր կնոջ և երկու երեխաների հետ, 3 ամիս ս. Կարապետի վանքի անտառներում դեգերելուց և շարունակ կռւելուց յետոյ սեպտեմբերի 22-ին փախել է դէպի Կովկաս և այժմ գտնվում է Երևանում: Շատ աղէտալի պատմութիւնների հետ սա պատմում է նաև ս. Կարապետի վանքում կատարված կոտորածի և նրա անտառում տեղի ունեցած կռիւների մասին:

Հայոց Ազգագրական Ընկերութեան կազմած հայ բանահիւսութեան վերաբերեալ նիւթեր հաւաքող արշաւախումբը միաժամանակ նիւթեր է հաւաքում նաև վերջին կոտորածների մասին. և հետևեալ հատուածը մի էջ է այդ նիւթերից, գրի առած վերոյիշեալ Մովսէս Տօնապետեանից:

⁂

Կաղըմ-բէյ՝ Մուշի հազարապետի պաշտօնակատարը, Ջիրարթի միւդուր Բէյրէմ էֆէնդին և մի գերմանացի օֆիցեր, որ համիդիէ զինուորներին վարժեցնում էր զինուորութեան, Մալականաց շէյխի 500 քիւրդ համիդիէ ձիաւորների և 22 ոստիկանների հետ այս տարվայ յուլիսի 3-ին շրջել են ս. Կարապետի շրջակայքը գտնված Ղէյլեան, Նոր-ակ, Մեղդի, Բաղլու, Ջիրաթ, Սորդար, Բաղու, Կրավարս, Ուռուխ, Անկաղ, Հասն-օվէն գիւղերը և 440 տղամարդ հաւաքել, բերել ս. Կարապետի վանքը, խաբելով թէ տանելու են Մուշ՝ աշխատեցնելու կառավարութեան գործերի համար: Երբ այս տղամարդկանց հանել են գիւղերից, ուրիշ զօրախմբեր վերոյիշեալ գիւղերի բոլոր կանանց ու երեխաներին, մօտ 5000 հայի, հաւաքել, քշել, բերել են ս. Կարապետի վանքը, նոյնպէս խաբելով, թէ տանելու են Մուշ՝ այնտեղից Հալէպ գաղթեցնելու:

Ս. Կարապետի վանքում Բաշէ քիւրդը վանքի վերակացու Զաքարին միամտօրէն ասել է.

— Ինչի՞ էք այդքան հաց ուտում, մի քանի ժամից յետոյ սպանվելու էք, շատ ուտէք, ձեր դիակներից վատ հոտ կը տայ, մեզ էլ կապականէ:

Զաքարը պատասխանել է.

— Մեր սպանվելուց յետոյ ինչ ուզում է թող ձեզ [illegible], մեր շու՞նչ փայլն է:

Այս խօսակցութիւնը լսողներն իրանց վերջին ճիգը թափել են գաղտնաբար փախչելու այդ տեղից, սակայն միայն տասը հոգի են աջողացրել:

Նոյն օրը կանանցից և աղջիկներից քիւրդերը ջոկել են գեղեցիկներին և պահել իրանց մօտ, իսկ միւսներին երեխաների հետ ուղարկել են Մուշ: Այստեղ միւս գիւղերից բերված հայ կանանց ու երեխաների հետ սրանց էլ խումբ-խումբ քշել են զանազան գիւղեր և յարդանոցներում փակելով այրել:

Հետևեալ օրը, յուլիսի 4-ին, այդ 430 տղամարդկանց ձեռքերը թոկերով կապել են և ապա թոկերով բոլորին միասին շղթայել: Թմբուլցի Նորայր վ.-ը կտրել է թոկը և ուզեցել է փախչել, բայց անմիջապէս խփել սպանել են:

Այս միջոցին գերմանացի սպան բարձրացել է վանքի պարսպի վրա և այստեղից ասել.

— Թիւրք կառավարութիւնը ինչ բարութիւն չը մնաց, որ չարաւ ձեզ, սահմանադրութիւնից մինչև մինիստրութիւն տուեց ձեզ, բայց դուք չը բաւականացաք և ինքնավարութիւն էք ուզում, այդ ձեր ինքնավարութիւնը իմ նշանատեղումս է, եկէք հանեցէք:

Եւ այս ասելով՝ նշան էր տուել, անմիջապէս մի քանի համազարկ տալ և բոլորին սպանել: Մինն էլ մի գնդակ է խփել վանքի վանահայր Եղիշէ վարդապետին, որ թէպէտ կապված չէ եղել, սակայն չէ ուզեցել հեռանալ իր ժողովրդից: Եղիշէ վարդապետը վիրաւորվել է և վայր ընկել ու, դառնալով Բայրամ էֆէնդիին, ասել է.

— Խնդրում եմ մի անգամ էլ խփեցէք, որ հանգստանամ:

Բայրամ էֆէնդին պատասխանել է.

— Հը՛, կուզես շուտ մեռնել, որ ցաւ չը զգաս. չէ, պէտք է մնաս ու տանջվես:

Բայց այս միջոցին մի ուրիշ գնդակ կպել է գանգին, ու Եղիշէ վարդապետը «հանգըստացայ» արտասանելով աւանդել է հոգին:

Այս բոլոր սպանվածների դիակները քաշ են տուել Խրիմեան Հայրիկի շինած դարպասի դրսի կողմը և լցրել մի փոսի մէջ և մօտակայ խուշկու կոյտը տուել սրանց վրա, փոքր ինչ ծածկել:

Այս շրջանի գիւղերից աւելի համարձակ տղամարդիկ և կանայք, մօտաւորապէս 4000 հոգի, կարողացել էին փախչել և ապաստանել ս. Կարապետի վանքի խիտ անտառում, ուր մինչև սեպտեմբերի 22-ը, որքան յայտնի է մեզ այս տեղեկութիւնները տուողին, սոսկալի նեղութիւններ կրելով կռւել են զօրքի և քիւրդերի դէմ: Գիշերները տղամարդիկ գնում էին շրջակայ դաշտերը, ցորեն քաղում, բերում, իր ցողունի մէջ բովում և կամ այնպէս հում-հում ուտում. մի քանիսն էլ 100 անտէր մնացած ոչխարներ քշել բերել էին, մորթում էին և եփում, առանց աղի ուտում: Վերջին օրերը գորտ, կրիայ, ծառերի վրա բուսնող սունկեր, ծըծմակներ էին ուտում:

Մովսէս Տօնապետեանը պատմում էր, թէ մի օր, երբ իրանք թագ կեցած են եղել անտառի խորքում խուսափելու իրանց հետևող քիւրդերից, մօտակայքում ապաստանած կանանցից մինի երեխան սկսել է լաց լինել: Սրանք մարդ են ուղարկել նրա մօտ, թէ տղայի ձայնը կտրիր, ապա թէ ոչ քիւրդերը այդ ձայնին կը գան, ձեզ էլ կը սպանեն, մեզ էլ: Խեղճ կինը իր բոլոր ճիգը թափել է քաղցած երեխային լռեցնելու, քաղցից ցամաքած ստինքը ի զուր մի քանի անգամ դրել է բերանը, սակայն երբ տեսել է, որ չի լռում, ձեռքը բերնին դրել՝ խեղդել է...

Սեպտեմբերի 22-ին քառասուն և հինգ տղամարդիկ, ինչպէս և շատ կանայք և երեխաներ սովամահ լինելու երկիւղից ըստիպված՝ գնացել են ս. Կարապետի վանքը և անձնատուր եղել:

Ս. Կարապետի վանքն այդ միջոցին, այսինքն սեպտ. 22-ին, այս տեսարանն էր ներկայացնում.

Վանքի բոլոր խաչերը կտրած, հանված են, ս. Կարապետի գերեզմանը փորված է իր գանձելու յուսով, վանքի յատակը ամբողջովին քար ու քանդ է արված, մի քանի գաղտնի պահարաններ բացված են, միայն միւռոնը դեռ չէ:

Վանքի սենեակներում ապրում են վերոյիշեալ Բայրամ միւդիրը՝ իր զինուորներով, և նրանցից ամեն մինը մի հայ աղջիկ պահում է իր մօտ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Վանի զինուորական շրջանի պետ փոխ-գնդապետ Տէրմէնը խնդրում է մեզ տպել հետևեալ յայտարարութիւնը.

«Խնդրում եմ Վան քաղաքի և Վանի շրջանի բոլոր այլ քաղաքների ու գիւղերի որբերին պատսպարող որբանոցների վարչութիւններին և անձանց՝ չը մերժել ուղարկել ինձ տեղեկութիւններ այդ որբերի անունների, ազգանունների և հասակի մասին, ինչպէս և նրանց ծնողների նախկին բնակավայրի և գոյքի մասին, որպէսզի որոնելով այդ գոյքերը, ես կարողանայի, պահպանել այդ որբերի համար նրանց ժառանգութիւնը, հաստատելով նրանց վրա և խնամակալութիւն կարգելով այդ որբային գոյքերի վրա»:

ՍԻՐԵՑԷ՛Ք ՈՐԲԻԿՆԵՐԻՆ...

(Այսօրվայ երեկոյթի առիթով)

Կարծես ճակատագրական է... բայց հաւատալ դրան թոյլատրելի չէ: Կեանքը մեր ձեռքին է, մեր բաղդի տէրերը մենք ենք, աջողութեան պայմանը դժուարութիւնների յաղթելն է:

Մենք ապրելու իրաւունք ունեցող ազգերին յատուկ՝ տոկալու հզօր կարողութեամբ լիառատ օժտված ենք, յատկութիւն՝ որ արտացոլում է ազգային առողջ ինքնագիտակցութեան փաստը:

Աղէտներ մենք շատ ենք տեսել, գազանաբարոյ վոհմակների աւերածութեան, խոշտանգումների ցաւը շատ ենք ապրել, այս էլ, այս՝ աղէտների ամենավիթխարին, մարդկութեան անծանօթ՝ գազանային զգացմունքներով արբշիռ, մարդ-գազանների երկնած ու գործադրած սարսափներն էլ, կը վերապրենք: Հուրն ու սուրը անզօր են բնաջնջելու այն, ինչ որ անմահ ազգային է: Հայը եղել է փարոս իրան շրջապատող խաւարի մէջ. որքան հալածվել, այնքան պիտի հրավառուի այդ փարոսի կենսաշող լոյսը...

Այսօր, վիթխարի դամբարանների կողքին, մենք ունենք անյագ մահվան ճիրաններից ճողոպրած՝ գաղթականներ ու որբեր, մի դոյզն մնացորդ այն խոշոր հայութեան, որն էր ամբողջովին հայ:

Ազգային անաղարտ ամբողջութեան պահպանման կարևորութիւնը, ինչպէս և ազգային պատուի գիտակցութիւնն ու այն զգացումը, որ մի արիւնակցի վիշտը տալիս է ապրել մեզ, թող տրամադրեն մեզ մտածված օգնութիւն մատուցանելու մեր գաղթականներին ու որբերին՝ մեր նահատակների սիրասուն աւանդներին...

Թիւրքահայերի Հայրենակցական Միութիւնը յօգուտ իր խնամակալութեան տակ գտնված որբանոցի ամսիս 26-ին ժողովարանում տալիս է երեկոյթ. չը թերանանք նպաստելու աջողութեանը մեր ներկայութեամբ:

Սիրեցէք որբիկներին...

Թօղ-Անուշ

ԿՈՎԿԱՍԻ ԶԵՄՍՏՎՕՅԻ ՄԱՍԻՆ

Մի շարք միջոցների թւում, որոնք նշանակված են Կովկասի կարիքները բաւարարելու համար, Մեծ Իշխան Փոխարքան անհրաժեշտ գտաւ կարճ ժամանակում մշակել արդէն սկզբունքով վճռված՝ Անդրկովկասում զեմստվօյին հիմնարկութիւններ մտցնելու հարցը, որպիսի հիմնարկութիւնները համաձայնեցվելու են երկրի տեղական առանձնայատկութիւնների հետ: Կովկասի ազգաբնակութեան համար առաջնակարգ կարևորութիւն ունեցող պարենաւորման գործի աշխատանքները ներկայումս վերջացնելու պատճառով, Ն. Կ. Բարձրութիւնը հրամայել է փոխարքայական վարչութեան բոլոր միջոցները ձեռք առնել, որպէս զի զեմստվօյին բարենորոգումների հարցը կարճ ժամանակում դուրս բերվի նախնական վիճակից և վիճակագրական ու այլ անհրաժեշտ նիւթերը սիստեմի վերածվեն:

Փոխարքայական վարչութեան կողմից բարենորոգումների գլխաւոր հիմունքները մշակելու համար մտադրութիւն կայ Ն. Կ. Բ. Անձնական նախագահութեամբ գումարել մի խորհրդակցութիւն, որին պէտք է հրաւիրվեն հասարակական կազմակերպութիւնների վարչութիւնները՝ տեղական պայմանները և առանձնայատկութիւնները բազմակողմանիօրէն և լիովին պարզաբանելու համար: («Կ.»)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

I

«Մշակի» 207-դ թիւը կը ստանամ այս պահուս, որուն առաջնորդողին մէջ կը կարդամ, թէ Կ. Պօլսոյ հայոց պատրիարքարանը կարողացեր է Ամենայն Հայոց Կաթողիկոսին հասցնել տեղեկագիր մը, ուր կը գուժէ, թէ Թիւրքիոյ մէջ կոտորուած, հարէմները տարուած հայերու թիւը 850,000-ի կը բարձրանայ: Բոլորովին անհաւանական է, որ Կ. Պօլսոյ հայոց պատրիարքարանը այդպիսի տեղեկագիր մը էջմիածին ղրկած ըլլայ: Այդ տեղեկագիրը ապահովապէս այն է, զոր Բուլղարիոյ հայերը՝ երկրէն առնուած տեղեկութեանց վրայ հիմնուելով՝ հաղորդած էին արտասահմանի գաղութներուն, հաւանօրէն օրինակ մըն ալ էջմիածին ղրկած են:

Այդ տեղեկագրին մէջ, զոր ես ինքս անձամբ տեսած եմ, ըսուած չէ թէ Թիւրքիոյ մէջ կոտորուած և հարէմները տարուած հայերուն թիւը 850,000-ի կը հասնի. հաւանօրէն պ. Առաքելեան այդ յօդուածը գրած է՝ էջմիածնէն այդ մասին նամակ մը ստանալէ յետոյ, առանց բուն տեղեկագիրը տեսնելու. այդ թիւը տեղեկագրին մէջ կայ արդարև, բայց կը ներկայացնէ ոչ միայն կոտորուածներն ու հարէմ տարուածները, այլև մահմեդականացածները և Միջագետք կամ այլ աքսորավայրեր քշուածները: Միևնոյն բանը չէ:

Մահմեդականացածները՝ կենդանի են, որ փրկուած են:

Քշուածներէն՝ եթէ մասամբ ճամբան ջարդուած կամ յոգնութեան և անօթութեան չը դիմանալով մեռած են, մաս մըն ալ — և թերևս կարծուածէն աւելի բազմաթիւ — հասած են աքսորավայրերը: Տեղեկագիրը քիչ մը չափազանց երևակայական ոճով գրուած է. աղէտը արդէն չափազանց ահռելի է. աւելորդ է, և նոյնիսկ վնասակար է, զայն աւելի ևս չափազանցեալ ձևով ներկայացնել: Տեղեկագրին համեմատ, յոյս չկայ որ քշուածներէն ոևէ մէկը տեղը հասած ըլլայ, իսկ եթէ երբեք հասնին, դատապարտուած են քանի մը օրէն մեռնիլ: Արդ, գերմանացի միսիոնարուհի մը Դէր-էլ-Զօր գացած, աչքովը տեսած է հոն՝ խաներու մէջ դիզուած հազարաւոր հայեր, շատ թշուառ վիճակի մէջ, բայց ողջ, և գրած է այդ մասին գերմանական թերթի մը մէջ: Փոխանակ այդ քշուածներն իբր կորած նկատելու, ազգովին պէտք է ջանանք անոնց օգնութիւն հասցնել, ինչպէս ամերիկացիք, անգլիացիք, զուիցերիացիք սկսած են ընել:

Աղէտը զարհուրելի է: Եթէ պատմուածներուն կէսն իսկ ճիշդ ըլլայ, խենթեցնող, քարացնող դժբաղդութիւն մըն է պատահածը: Բայց չփութանք համակերպիլ այդ սոսկալի ու քանդիչ գաղափարին հետ, թէ Թիւրքիոյ մէջ ամբողջ հայութիւնը ջնջուած է և ամեն բան մեզի համար անդառնալի կերպով կորած: Ճիշդ չէ ատիկա: Ու նոյնիսկ մեզի հասնող հաղորդումներուն մէջ՝ չափազանցութիւն կայ. անխուսափելի է այդ՝ նմանօրինակ բոլոր ճգնաժամներուն մէջ, ամեն տեղ: Աղէտը անշուշտ դեռ չէ վերջացած, և կորածներուն թիւը օրէ օր անշուշտ կը բարձրանայ, բայց ճիշդ չէ վերջապէս՝ որ Թիւրքիոյ հայութիւնը բնաջինջ եղած է, և պէտք չէ ուրիշ, որ ատիկա մենք իբր կատարուած իրողութիւն ընդունինք և տարածենք օտարներուն մէջ. ընդհակառակն, մենք ջանալու ենք (և արտասահմանի հայերը կրնան կոր՝ ինչ որ կարող են), որ հալածանքը կասի և Թիւրքիոյ հայութեան մնացորդները փրկուիլ կարենան: Անյուսալի չէ, որ պապին և Ամերիկայի նախագահին միջամտութիւնը ապարդիւն մնայ: Փափաքելի էր, որ Ամենայն Հայոց Հայրապետը շնորհակալութեան գիր մը ուղղէր պ. Ուիլսընին և պապին. պ. Ուիլսըն, ինչպէս և Կ. Պօլսոյ ամերիկեան դեսպանը այժմ մեծ եռանդով կաշխատին հակահայ հալածանքը դադրեցնելու. իսկ պապը շատ կորովի կերպով միջամտած է թէ սուլթանին և թէ աւստրիական ու գերմանական վեհապետներուն մօտ (և այս երկուքն ալ մեծ կարևորութիւն կուտան պապին, նոյն իսկ քաղաքական տեսակէտով, որովհետև հաշտութեան միջոցին անոր ազդեցութեանը պէտք պիտի ունենան): Ի՛նչ սրտայոյզ ու գեղեցիկ նամակ մը կայ գրուելու՝ Հայաստանեայց սգաւոր Եկեղեցւոյ Պետին կողմէ առ Հռոմէական Եկեղեցւոյ Պետը, իր եղբայրական օգնութեան ժեստին առթիւ:

«Հայկական հալածանքները քննող ամերիկեան յանձնախումբը», որ կազմուած է ամերիկացի նշանաւոր անձնաւորութիւններէ, օտար և հայ ականատեսներու գրաւոր ու բերանացի վկայութեանց վրայ հիմնուելով՝ տեղեկագիր մը խմբագրած է, 850,000 թիւը չի տար, այլ 500,000. «Ապացոյցներուն նայելով՝ այնպէս կերևայ, թէ 500,000 հայեր արդէն մորթուած են կամ անապատները քշուած»*): Ո՞ր թիւն է ճիշդ, չենք գիտեր: Չփութանք ուրեմն վերջնական եզրակացութեանց յանգիլ: «Ճշմարտութենէն պէտք չէ վախնալ», կը գրէ Շիրվանզադէ: Շատ ճիշդ է, բայց նախ պէտք է որոշապէս և ապահովապէս գիտնալ բուն ճշմարտութիւնը: Ահռելի է ան՝ անտարակուսելի կերպով, բայց դեռ՝ ոչ յուսահատեցուցիչ: Մաքառինք՝ փոխանակ վհատելու, գործենք՝ փոխանակ միմիայն ողբալու: Երբ աղէտին հանդէպ կը տեսնեմ Տիգրան Նազարեան մը, որ փոխանակ վհատելու՝ հարիւր մարդու գործ կը տեսնէ, փախստականներուն օգնելու համար անհաման անձնուիրութիւն ցոյց տալով, բոլոր հոգւոյս կը ծափահարեմ. ահա դիրքը, զոր պէտք է բռնենք աղէտին հանդէպ: Ամեն ձևով, ամեն միջոցով աշխատինք՝ կարենալ փրկել Թիւրքահայութեան մնացորդները, երկրին մէջ, ու երկրէն դուրս. այդ է էականը: Եզրակացութեանց, քննադատութեանց, վերլուծումներու առենը չէ: Առենը չէ մանաւանդ պատասխանատուութիւններ փնտռելու, որովհետև զայդ ընելու համար պէտք է կարենալ ամեն բան ըսել, և ատիկա անկարելի է ներկայ րոպէին: Արդար չէ միմիայն Հայկական Բիւրօյին օձիքը բռնել և ըսել թէ անոր գործելակերպն է պատճառ այս աղէտին:

Հայկական Բիւրօն ունեցաւ իր թերութիւնները, որոնց մեծագոյնն այն է, որ չունեցաւ այն կամքը և չբռնեց այն ընթացքը, որ պէտք էր և կարելի էր, Կովկասի և արտասահմանի ամեն կուսակցութեան և հատուածի հայոց հանդէպ անվիճելի հեղինակութիւն ստանալու, և ասով իսկ՝ անհրաժեշտ եղող ընդհանուր համերաշխութիւնն ապահովելու, միաբան, միալար, համախորհուրդ, միահաղոյն գործունէութիւն մը իրականացնելու համար:

Հայկական Բիւրօն, այո՛, ունեցաւ իր թերութիւնները, բայց արդար չէ՝ կը կրկնեմ՝ անոր գործունէութիւնը նկատել իբր շարժառիթ այս ահաւոր դժբաղդութեան. եթէ ընդունինք, որ Թիւրքիայէն դուրս գտնուած հայոց՝ դաշնակիցներուն հանդէպ ցոյց տուած համակրութիւնն ու անձնուիրութիւնը, մանաւանդ ռուս բանակին կամաւորներ տալու որոշումը, Թիւրքը կատղեցնելով պատրուակ կամ դրդիչ եղաւ անոր՝ այս հսկայ ոճիրը գործելու, միթէ ատոր համար կարելի է մեղադրել միմիայն Հայկական Բիւրօն՝ ամբողջ Կովկասի հայութիւնը, ինչպէս և արտասահմանի գաղութներու բոլոր հայերը համաձայն եղան այդ ուղղութեան, Ամենայն Հայոց Հայրապետը օրհնեց մեր կամաւորները և ազգային պատուիրակութեան նախագահը իր կոչին մէջ, զոր բոլոր լրագիրները հրատարակեցին, գովեց զանոնք և անոնց նպաստելու համար գումարներ ղրկեց. ու կովկասեան բանակին մէջ հայ, ու մանաւանդ Թիւրքահայ, կամաւորներ գտնուիլը չէ միայն, որ կրնայ գրգռած ըլլալ Թիւրքը, այլ և «Ինքնավարութիւն կուզենք» աղաղակը, զոր ամենս ալ արձակեցինք. Թալէաթ-բէյ ամերիկեան դեսպանին ըսեր է. «Հայերը այնպիսի վիճակի մէջ պիտի դնեմ, որ 50 տարի «ինքնավարութիւն» բառը բերաննին առնելու անկարող ըլլան...»:

Ո՛չ, աղէտին գլխաւոր պատասխանատուն մեր ազգին չար բաղդն է. ամեն բան մեզի հակառակ դարձաւ. դէպքերը, որ այնքան նպաստաւոր էին՝ կամ կը թուէին՝ մեր դատին, անակնկալօրէն աննպաստ հանգամանք մը առին. եթէ կովկասեան բանակն աւելի հզօր ըլլար, և եթէ Կ. Պօլսոյ դէմ դաշնակիցներուն յարձակումն աւելի խելացի ու լուրջ ձևով սարքուած ըլլար, Թիւրքը՝ զսպուած, սանձուած՝ բնաւ երբեք չպիտի համարձակէր այդ վիթխարի եղեռնը գործելու: Մէկդի դնենք ուրեմն աղէտին պատճառները մանրամասնօրէն քննելու անժամանակ մտահոգութիւնը, և մեր բոլոր եռանդն և ուժերը յատկացնենք կատարելու պարտքը, զոր ունինք ներկայ րոպէին. մեր պարտքն է՝ դէթ այժմ, այս ահաւոր դժբաղդութեան հանդէպ, ցոյց տալ ինչ որ այս ճգնաժամին սկիզբէն իսկ պէտք էր ցոյց տայինք, այն է՝ համերաշխութիւն, տակտ, զգուշութիւն՝ կորովի հետ միացած, հեռատեսութիւն՝ խանդավառութեան հետ միացած. ազգային մեծ սուգին մէջ անկեղծօրէն եղբայրացած, մոռնալով դէթ պահ մը մեր ներքին ոխերն ու պառակտումները, մեր բոլոր կրցածն ընենք կարենալ փրկելու Թիւրքահայութեան մնացորդները, և կարենալ փրկելու նաև մեր դատը, որ կը մեռնի միայն այն ատեն, երբ հաւատքը չքանայ մեր մէջ:

Ատոր համար աւելի քան երբեք անհրաժեշտ է, որ խորհրդակցական համաժողով մը (այդ մասին միշտ համաձայն եղած եմ «Մշակի» խմբագրապետին) գումարուի էջմիածին կամ Թիֆլիս, ներքին պառակտումներն ու վէճերը մի անգամ ընդ միշտ ջնջելու, աղէտին ստեղծած կացութեան համապատասխան գործունէութեան ուղեգիծ մը որոշելու և այսուհետև, գոնէ այսուհետև՝ միաբան ու համերաշխ գործելու անհրաժեշտ պէտքին գոհացում տալու համար:

Միութիւն ու հաւատք, ահա ինչ որ պիտի փրկէ մեզ:

Ա. Չօպանեան

Փարիզ, 20 Նոյեմբեր (ն. տ.)

---

*) «Կոչնակ», թիւ 40.

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հայոց եկեղեցին յանձին Կարապետ եպիսկոպոսի կորցրեց իր ամենաառաջնակարգ ուժերից մէկին։ Այս ցաւոտ ու խառնակ օրերին, երբ արժանաւոր մշակների կարիքը խիստ մեծ է, երբ առանց այդ էլ հոգևոր ասպարէզը դարձել է խոպան, երբ հրապարակի վրա չեն երևում պահանջված թւով համեստ և մաքուր գաղափարով տարված գործիչներ և հրապարակը մնացել է բարոյապէս թոյլերին, ահա այդ օրերին կորցնել այնպիսի մի հոգևորականի, ինչպիսին էր Կարապետ եպիսկոպոսը, իրօք խիստ մեծ ցաւ ու վիշտ պիտի պատճառէ ազգը սիրող, եկեղեցին սիրող ամեն մի անհատի։

Կարապետ եպիսկոպոսն արժանաւոր էր նախ որպէս անհատ, որպէս մարդ, անպայման ազնիւ ու շիտակ։ Արժանաւոր էր գիտական իր պատրաստութեամբ. համարձակ կարելի է ասել, որ ներկայ հայ հոգևորականութեան մէջ ամենապատրաստված հոգևորականն էր։ Կարապետ եպիսկոպոսի ամենադրական, լաւ ու էական կողմն այն էր, որ նա կոչումաւոր հոգևորական էր, համոզմունքով, հաւատքով օժտված. նման չէր շատերին, որոնք զգեստով, վեղարով և առ հասարակ արտաքինով են հոգևորական, այլ ոչ իր ներքին խորին համոզմունքներով։

Կարապետ եպիսկոպոսը իր արժանիքներով զարդարում էր հոգևորականի սքեմը և ամենևին նման չէր նրանց, որոնք իրանց արժանաւորութիւնները ծածկում են հոգևորականի սքեմով։ Կորուստը մեծ է և նրա բացը բաց էլ կը մնայ։ Իր դրական և գովանի յատկութիւններով յաճախ և ամենապայծառ կերպով հանդէս է եկել իբրև ուսուցիչ, երբ իր աշակերտների առաջ կանգնած էր իր արտասանած խօսքի խորապէս համոզված մի անձնաւորութիւն. երբ իր անհատական հեղինակութեամբ իր աշակերտներին դաստիարակում էր քրիստոնէական ոգով։ Եւ Կարապետ «հայր սուրբը» մնաց սիրելի ուսուցիչ իր բոլոր աշակերտների համար, որոնք այժմ ամենուրեք ցրված ողբում են իրանց մեծ կորուստը։

Ողբում ենք և մնացել շշմած այս մահուան առաջ. անսպասելի հարուած դու հասցրիր առանց այն էլ մեր ակար մարմնին և թոյլ հոգիներին։ Ուզում ենք մեզ մխիթարել և չենք գտնում մխիթարութիւն...։ Ոյժեր լարում, քո դաւանանքը, քո կերպարանքը, քո ոգևորութիւնը մեզ յոյս ներշնչում և փոքր ինչ ուժգնացած, մենք մեզ հաւաքում և յիշում, որ դու չէիր սիրում ակար թուլութիւն։ Սիրելի ուսուցիչ, ինչպէս դու, արևմուտքից վերադարձած ու գիտութեամբ զինված, Գէորգ կաթողիկոսի գերեզմանի վրա հրապարակով երդւում տուիր հաւատարիմ մնալ քո դաւանած ուխտին ու սկզբունքներին և, իրօք, առանց մազաչափ շեղվելու կատարեցիր քո տուած երդումը, այնպէս էլ մենք, քո որբացած աշակերտներս, որ քո դասերի ընթացքում սնվել ենք քեզ ոգևորող գաղափարներով, երդվում ենք քո թարմ շիրմով, քեզ ամփոփող հողակոյտով՝ հաւատարիմ մնալ քո պաշտելի եկեղեցուն։

Սիրելի ուսուցիչ, ինչպէս դու՝ ամեն ժամանակ բնակվեցիր քո սիրած տան մէջ, մեզ էլ ոյժ տուր ապրելու այդ քո սիրած տան մէջ։ Յաւիտենականութիւնից եղիր մեզ զօրավիգ այս փուչ աշխարհում կրելու քո խաչը, որին դու փարեցիր։ Քեզ կորցնում ենք շատ անժամանակ, քեզ փոշմանում են և նրանք, որոնք քեզ հետ չեն եղել, քեզ չեն հաւանել, քեզ չեն դաւանել, քեզ չեն սիրել։ Սկզբից մինչև վերջ ծափեր չը սիրեցիր, ծափերի ետևից չը գնացիր, փառք չորոնեցիր. ամբոխն ու ծափաւորներն էլ քեզ չուզեցին...։ Դու կը լինես մեզ հետ... բայց քեզ կորցրինք շատ անժամանակ։

Խ. Ք. Խուցեան

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋԸ

Ալէքսանդրապոլից ուղարկված է հետևեալ հեռագիրը.

«Էջմիածին, Նորին Սրբութիւն Վեհափառ Հայրապետին.

«Սրտի կսկիծով լսելով անգուգական հովւի, պատկառելի գիտնականի և Հայաստանեայց Եկեղեցու անձնուէր զինւոր՝ Շամախու թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսի անժամանակ մահվան բօթը, Ղփչաղի վանքի հոգաբարձութիւնը յայտնում է Ձերդ Վեհափառութեան՝ բազմատանջ Հայաստանեայց Եկեղեցու Գլխիդ՝ իր խորին և անկեղծ ցաւակցութիւնը։ Թող Աստուած օգնի Ձերդ Վեհափառութեան տանելու այդ անփոխարինելի կորստի պատճառած վիշտը, և յարուցանի նոր արժանաւոր և անձնուէր հովիւներ այդ եկեղեցուն ծառայելու համար»։

Ղփչաղ վանքի և դպրոցի հոգաբարձուներ՝

Արտակ վարդապետ, Մեսրոպ ա.-ք. Գեօնջեան, Երուանդ Տէր-Մինասեան, Կարապետ Ափինեան, Սարգիս Խօյեցեան, Համբարձում Տէր-Ղազարեան

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կովկասի ռազմաբեմի փախստականների գործի կարգադրութեան գլխաւոր լիազօր գեն.-մայոր Վ. Մ. Թամամշեան, լիազօրներ Գ. Ս. Բեղլ[illegible] և Լ. Գ. Եւանգուլեանի [illegible] ութեամբ մեկ[illegible] նեցին Պարսկաստան՝ Ջուլֆայի ուղղութեամբ փախստականների դրութիւնը դիտելու և կարևոր կարգադրութիւններ անելու։

—

Քաղաքային Միութեան Երևանի կոմիտէտը քննելով մի քանի թէյարաններ և սննդատու կայաններ վերացնելու հարցը, որոշեց փախստականների շարժման բացակայութեան պատճառով այդ կայանները վերացնել Փարաքարում, Էջլարում և Սուխոյ-Ֆոնտանում, պահպանելով նրանց Ելենօվկայում և Ներքին-Ախտայում։ Կոմիտէտը որոշել է իր ռայօնում բանալ հինգ բաղնիք և միջնորդել, որ իւրաքանչիւր մահճակալի ծախքը 40-ից բարձրացնել 50 ռուբլու։ Այս որոշումները ներկայացված են Քաղ. Միութեան Կովկասեան Կոմիտէտին։

Քաղաքագլուխ Ալ. Խատիսեանը Անգլիայից, պարլամենտի անդամ Վիլեամսից ստացել է 72,000 ր., որը և փոխադրելու է Ամենայն Հայոց Կաթողիկոսին փախստականների կարիքների համար։ Վիլեամսը իր հեռագրի մէջ յայտնում է, որ շուտով ուղարկելու է նաև 45,000 ր. նոյն նպատակով։

—

Թիֆլիսի Հ. Կենտրոնական Կոմիտէն իր նոյեմբերի 23-ի նիստում արել է հետևեալ որոշումները. 1) Գանձակի 86 որբերից իւրաքանչիւրին ամսական յատկացնել 7 ր. 50 կ., որպէս նպաստ, որ անում է 645 ր. սննդի փող, իսկ առաջուց ուղարկված 1000 ր. գումարը յատկացնել կահաւորման. 2) Երևանի 410 որբերին նոյնքան ամսական. 3) որբանոցներում պէտք է մտցվի միատեսակ հաշւապահութիւն, հարկաւոր է ունենալ և մի շրջիկ հաշւապահ գաւառների համար. 4) ի նկատի ունենալով որ Հայ Կանանց Կոմիտէն բացում է նոր որբանոց, Կենտր. Կոմիտէն յատկացնելու է 1400 ր. որբանոցին, 900 ր. կահաւորման, իսկ 2300 ռուբլի էլ աւանս տալ։ Կենտր. Կոմիտէն մինչև այժմ պետական նպաստ ստացել է 3000 որբերի համար այժմ Պետական Դումայի անդամ Միք. Պապաջանեանը միջնորդում է, որ նպաստ բաց թողնվի 5000 որբերի համար։

ՀՐԱՏԱՊ ՍՓՈՓԱՆՔ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻՆ

Կիրակի, ամսիս 22-ին, ապաստարանս մկրտեց հայրենիքի 4-րդ նորածնին, ի պատիւ իր Վեհափառ Հովանաւորի տուաւ Գէորգ անունը, կնքահայրութիւնը ստանձնել էր «Հրատապ-սփոփանքը» ի դէմս հինգամեայ փախստական Յաբէթի, կնքահայր և Վարագայ վանքի 45-ամեայ քըրտընաջան պահապան պ. Պետրոսի մօր՝ սանամայր։ Մի աշխատաւոր ռուս կին սրտաբուխ նուէր էր բերել նորածնին զգեստ և անկողին։

Ստացված են նուէրներ՝

Դրամով՝

Հ. Բ.-ից 5 ր., Սանտրական Տուն եղբ. Տէր-Գասպարեաններից 5 ր., Հեղինէ Կրասինիկեանից 100 ր., եղբ. Բաղդասարեաններից 400 ր., Նովօրոսիյսկից՝ Մինաս Բարսամեանից 1 ր., Բալախանիից՝ Տէր-Յակոբեանի ծառայողներից պ. Գարեգին Մարգարեանի միջոցով 20 ր., Զաքաթալայից՝ Աստուածատուր Բէկ-Յովսէփեանից 2 ր.։

«Մշակի» միջոցով՝

«Մշակ» № 260—5 ր., № 261—13 ր.։

Իրերով՝

Դերասանուհի տ. Լիւսի Սեւումեանից 1 ոչխար, № № 1 ф. չայ, Марья Лонкова-ից նորածին մանկան համար իր ձեռքով կարած շքեղ ճերմակեղէն և անկողին։ Տիկին Թումանեանից 2 դօշակ, 2 վերմակ, 2 բարձ, տ. Մաթէոսեանից 38 կտոր զանազան զգեստ, ճերմակեղէն, գլխարկ երեխաների։

Տ. Նազարեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Դեպուտատական ընտրութիւն

Կարս, 17 նոյեմբերի

Կարսում աշնան եղանակները հիանալի անցան, մինչև հիմա գեղեցիկ և տաք օրեր են լինում։ Մերձակայ սարերումն էլ դեռ ձիւն չը կայ։ Դեռ ջուրը չի սառչում և հենց այս րօպէիս անձրև է գալիս։

Հոկտեմբերի 25-ին կատարվեց քաղաքիս դեպուտատական ընտրութիւնը և առաջարկվեց նահանգապետին հաստատել։ Բայց բծախնդիր մարդիկ ընտրութիւնը բեկանելու համար դիմում են անթոյլատրելի միջոցների։

Ս. Տէր-Մելքիսեդեկեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Մեզ հաղորդում են, որ պատշաճաւոր զինուորական իշխանութեան կողմից քրէական-դատաստանական գործ է յարուցված բժ. Հ. Օհանջանեանի դէմ, նրա խմբած տենդենցիօզ հեռագրի մասին 500 հոգու կոտորածի մասին։

◆ Նոյեմբերի 28-ին Թիֆլիսի շրջանային դատարանում նշանակված է Թիֆլիսի էլեկտրաքարշի վարչութեան յարուցած դատը քաղաքի դէմ, որ սա անուղղակի խառնակմունքներ է դրել անօնիմ ընկ. վրա, և քաղաքի դատը ընկ.-եան դէմ՝ էլեկտրաքարշը քաղաքին յանձնելու մասին։

◆ Թիֆլիս է եկել Մոսկվայի յայտնի իրաւաբան Տեսլենկօ, որ ամսիս 28-ի դատավարութեանը պէտք է պաշտպանի քաղաքի իրաւունքները ընդդէմ անօնիմ ընկերութեան։

◆ Անցեալ օրը Ալ. Խատիսեանի նախագահութեամբ տեղի ունեցաւ մի խորհրդակցութիւն ռուս գերիների համար Թիֆլիսում հանգստանոցութիւն կազմակերպելու։ Այդ խորհրդակցութեան մէջ ընտրվեց մի յանձնաժողով Բուկնշտէյնի նախագահութեամբ հանգստանոցութեան գործը առաջ տանելու համար։ Այստեղ որոշվեց նաև խնդրել Կովկասի Քաղաքների Միութեան գործի կազմակերպութեան համար վարկ բաց թողնել։

◆ Էլեկտրաքարշի կոնդուկտօրները դիմել են ընկ. գլխաւոր լիազօրին, խնդրելով որ արգելվի 5 հոգով էլեկտրաքարշի նստարանների վրա նստելը, որովհետև առաջ են գալիս մեծ դժուարութիւններ և վտանգները անխուսափելի են։ Գլխաւոր լիազօրն այդ առիթով բանակցում է քաղ. վարչութեան հետ։

◆ Քաղ. Միութեան տեղական ճիւղի լիազօրը մի խնդիրք է ստացել Ղալվինի զօրախմբի հրամանատար գեն. Բ.-ից, որով վերջինս առաջարկում է Սարըղամիշի, Բաշկէյի և միւս վայրերում եղած լուացարանների օրինակով լուացարան և բաղնիք հաստատել Ղալվինում։

Քաղ. վարչութիւնը դիմել է առանձին խորհրդակցութեան լիազօր Շաշկովսկուն, խնդրելով, որ սա միջնորդի, որպէս զի մի գնացք տրվի 30 վագոնով Փոթիում եղած փայտերը Թիֆլիս բերելու։

◆ Աղջկանց 3-րդ գիմնազիայի ծնողական ժողովը որոշել է դիմել Փոխարքային, խնդրելով որ թոյլ տրվի դպրոցում վրաց լեզուի դասաւանդութիւն մտցնել։

◆ Թիֆլիսի պօստ-հեռագրատան կառավարիչը խնդրում է մեզ տպել հետևեալը. «Ի նկատի ունենալով ներկայ անցքերը, նաև կառավարական և առանձին կարևոր հեռագրերի կանոնաւորութեան համար, ներքին գործերի մինիստրութեան կառավարչի կարգադրութեան համաձայն, Թիֆլիսի շրջանի բոլոր պօստային հաստատութիւններում դեկտեմբերի 4-ին, 6-ին, 24-ին, 31-ին և 1916 թ. յունվարի 1-ին շնորհաւորական հեռագրեր չեն ընդունվելու։

◆ Կովկասեան շերամապահական ընկ. տեղեկութիւնների համաձայն, շերամի սերմի տեղական արտադրութիւնը բաւարարում է $^1/_3$ պահանջը, իսկ մնացեալ $^2/_3$-ը ստացվում էր Թիւրքիայից, Իտալիայից և Հիւսիսային Ֆրանսիայից։ Ներկայումս արդէն, պատերազմի ժամանակի պատճառով, Թիւրքիայից շերամի սերմ ստանալ, ի հարկէ, անկարելի, իսկ Իտալիայից և Ֆրանսիայից կարելի է ստանալ Անգլիայի և Ֆինլանդիայի վրայով. սակայն շերամի սերմը այդքան ճանապարհ չի դիմանայ։ Այժմ, շերամապահական կայանը, ի նկատի ունենալով այս բոլորը, դիմել է զանազան գիւղատնտեսական կազմակերպութիւնների, խնդրելով յայտնել՝ թէ իրանք որքան կարիք ունեն շերամի սերմի, ինչպէս տեղական, նոյնպէս և արտասահմանեան արտադրութեան։

◆ Այսօր, ամսիս 26-ին, նահանգապետ Ստրախովսկիի նախագահութեամբ կը կայանայ «Շուտափոյթ բժշկական օգնութեան» ընկերութեան նիստը, մի շարք կարևոր խնդիրների համար։

◆ Կիրակի, ամսիս 29-ին, Կայսերական Երաժշտական դպրոցի դահլիճում հայ գրող Կարա-Դարվիշը դասախօսելու է «Գալիք օրերը և ապագայ գեղարուեստը» կամ «Քաղաքը և գրականութիւնը» թեմայով։ Դասախօսը իր բանախօսութեան մէջ շօշափելու է ժամանակակից տիրող հոսանքները, գլխաւորապէս ֆուտուրիզմը և քաղաքը մեր և օտար գրականութիւնների մէջ։ Դասախօսութիւնից յետոյ Կարա-Դարվիշը կը կարդայ իր գրուածքներից կտորներ։ Դերասան Գալֆայեանը կարտասանէ ոտանաւորներ։

—

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Պետրօգրադում վերջացան աջակողմեանների խորհրդակցութիւնները։ Բանաձևի մէջ անհրաժեշտ է ընդունվել շարունակել պատերազմը մինչև գերմանացիների և աւստրիացիների կատարեալ պարտութիւնը. առաջարկվում է դադարեցնել գերմանացիներին ռուսահպատակութեան ընդունելը. տարածել ամբողջ Ռուսաստանի վրա փետրվարեան կանոնները. գրաւել բանկերում գրաւ դրված բոլոր ապրանքները. մենավաճառ դարձնել ապահովագրութեան գործը. անհնարին համարել հրէաների սահմանափակումները վերացնելը, որովհետև հրէութիւնը Գերմանիայի հետ դաշնակից է Ռուսաստանի դէմ. չը պէտք է թոյլ տալ, որ բլոկը ձեռնամխէ Հիմնական Օրէնքներին. հարկաւոր է հսկողութիւն սահմանել զեմստվոյին և քաղաքային ու այլ կազմակերպութիւնների վրա։

◆ Աջակողմեանների նախաձեռնութեամբ, Պետական Խորհրդի մէջ նախագծվում է զեմստվոյին և քաղաքային միութիւնների ապագայ գործունէութիւնը ենթարկել կառավարութեան ներկայացուցիչների հսկողութեանը։

◆ Պետրօգրադից հեռագրում են, որ հրատարակվել են պարտադիր որոշումներ բնակարանային գները աւելացնելու դէմ։

◆ Պետրօգրադից հեռագրում են, որ ֆինանսների մինիստրը մշակում է մի օրինագիծ, որի համաձայն պրոմիսօրային հարկին ենթարկվելու են լրագիրների և թերթերի հրատարակիչները և անձնապէս այդ հրատարակութիւնների գրասենեակային ծառայողները։

◆ Ներքին գործերի մինիստրութեան մէջ այն կարծիքն է տիրում, որ զեմստվային միութիւնը հրաժարվեց փախստականներին օգնելու գործից այն պատճառով, որ տեղերում գլխաւոր լիազօրներ նշանակվում էին նահանգապետները, որոնք և ըստ ամենայնի խոչընդոտ են հանդիսանում միութեան գործունէութեանը։

◆ Ֆինանսների մինիստրը նախագծում է աւելացնել էլեկտրական լուսաւորութեան վրա սահմանված տուրքը մի ժամին կիլօուատի համար $^1/_4$ կոպէկից մինչև չորս կոպէկ։ Այդ յաւելումից տարին կը ստացվի $17^1/_2$ միլիօն ռուբլի։

ՖԷԼԻԷՏՕՆ

«ՓՏԱԾ ԴԻՍԿԸ»

(Նուէր հայ Ուսուցչ. Միութեան)

Այն, ինչ պիտի պատմեմ ձեզ, յարգելի ընթերցողներ, նոյնութեամբ տեղի ունեցաւ վերջին Կովկասի հայ վարժապետ-վարժուհիների ընդհանուր ժողովում։

Ձաւեշտը այնտեղ անձամբ պիտի տեսնէնք, Դժուար թէ աչողվի մեզ լիովին պատկերացնել այն ամենը, ինչ կատարվեց. բայց փորձենք գոնէ մի քանի շտրիխներ տալ այն եղելութիւններին, որոնք, ինքնին, արժէքաւոր են։

I

Լրագրական յայտարարութիւններից իմացանք, որ Թիֆլիսի հայ վարժապետները մեծ ակտի նախօրեակին են գտնվում։
Միայն թէ՝ մեզ համար անորոշ մնաց՝
Յուղարկաւորութեա՞ն հանդէս է թէ մկրտութեան։
Բայց հարկաւոր պատրաստութիւնները տեսնված էին...
Հրաւիրված էր քահանան՝
Թէև առանց շուրջառի և...
Տիրացուն։
Ասենք՝ իրանք վարժապետները կարող էին փոխարինել տիրացուներ։
Շատ տեղերում նրանց ասում են՝
Տիրացու։
Դահլիճ մտնելու-պէս աչքիս խփեց մի մեծ ցուցատախտակ, որի վրա գրված էր.
«Փտած դիսկ»։
Ժողովասրահում դագաղ չը տեսանք,
Բայց «տապանաքարի» մասին խօսեցին ժողովում, ճշմարիտ եմ ասում։
Այդքան նախազգուշութիւններից յետոյ մոռացված էր, սակայն, ախտահանութիւն կատարել։
«Փտած դիսկից» օդը ապականված էր...

II

Մեծամեծ գործերից և խմբակցութիւններից մէջ աշխատելուց բեզարած՝ Թիֆլիսի հայ վարժապետները վերջ ի վերջոյ եկել էին կանչելու նորից՝
«Ուսուցչական Միութեան»։
Թէև նրանք առանց կարմրելու բարձրաձայն յայտարարեցին,
Որ հայ ուսուցչութիւնն է
Փտած դիսկը։
Եւ պ. Դեմիրճեանն էլ յայտնեց՝
— Տապանաքարը պիտի դնել դիսկի վրա։
Սրամիտներից մէկն էլ՝ պ. Մելոյեան գոչեց անմիջապէս.
— Որ դիսկը էլ դուրս չը գայ գերեզմանից։
Բայց արի տես, որ «Փտած դիսկի» մասնիկները,
Տրամաբանօրէն՝ իրանք են փտած,
Հաւաքվել էին
Կենդանացնելու դին.
Կամ, ինչպէս պ. Խանոյեանը արտայայտվեց պատկերաւոր.
— Վերաշինել աւերակները, որովհետև «Արտաշէսը իր մահից յետոյ աւերակներ էր թողել Արտաւազդին»։
Ցանկանք, որ յուղարկաւորութեան եկած դիերը վերաշինեն աւերակները. միայն թէ Արտաւազդի պէս
Խորխորատը չը ընկնեն...

III

Ժողովը բացվելուն պէս ընտրեցին նախագահ պ. Աւետեանին.
Խնդրեմ չը շփոթել դերասան Աւետեանի հետ.
Յետոյ բանից երևաց, որ ընդհանուր ժողովի նախագահը
Ուսուցչական Միութեան անդամ չէ.
Եւ ընտրողներն էլ բացարձակ մեծամասնութեամբ անդամներ չեն.
Ահա... [illegible]
Բայց դիակները ողբերգութիւն չեն սիրում. խաղացին կօմէդիա.
Հանալ սկսեցին։
Այնուամենայնիւ դրութիւնը խայտառակ էր, պէտք էր մի ելք գտնել։
Եւ վարչութեան նախագահ պ. Երզնկեանը գտաւ...
Բացեց լայն կրեդիտ բոլորի համար։
Թէև տարին պատերազմական է և ոչ մի վաճառական իր ամենահին մուշտարուն անգամ կոպէկ չէ վստահանում,
Բայց նա հաւատաց իւրաքանչիւրին ապառիկ՝ 2-ական ռուբլի։
Միայն թէ պահանջեց ստորագրութիւն,
Թէկուզ մատիտով։
Վեքսիլի և նոտարիուսի ծախս չարին։
Թուղթը Յովնանեան դպրոցինն էր.
Իսկ կտրած մատիտն էլ գրպանից հանեց պ. Թօրոսեանը։
Ժողովականները պ. Արզեանի գրգմամբ շատ «չեմ ու չում», ամբողջ մի ժամ բազար արին։
Վերջապէս պ. Աբեղեանի (ոչ Մանուկ) տուած խելախ օրինակից սրտապնդված՝ ժողովականների մի մասը ստորագրեց
Այնպիսի խորամանկութեամբ,
Որ ապառիկները գանձելու ժամանակ վարչութիւնից ոչ ոք նրանց ազգանունները կարդալ չը կարողանայ։
Կարծեմ հաւաքվեց մօտ քսան ստորագրութիւն։
Արի տես, որ վարչութիւնը նաղդ քսան կոպէկ էլ չը ստացաւ...
Չը նայած պ. Դեմիրճեանը պարծեցաւ ժողովում, որ իր կօստիւմին ամբողջ
Վաթսուն մանէթ է տուել...
Բայց չէ՞ որ հայ վարժապետների գրպանում մկներն են խաղում։

IV

Հէնց այդ քսաւիրութեան մասին հառաչանքով խօսեց պ. Տէր-Միրաքեան։
Նա գեղեցիկ կերպով համեմատեց հայ ուսուցչին ախոռապանի հետ...
Գալիօրկայից մէկը գոչեց վշտահար.
— Նրանք հաղարներ են ստանում.
Խե՛ղճ տղայ։ Հաւանօրէն՝ ախոռապանութեան խնդիր էր ներկայացրել և մերժում ստացել.
Որից յետոյ ոտք էր դրել
Հայ ուսուցչական ասպարէզը։
Այդպիսիների թիւը, ասացին, քիչ չէ հայ ուսուցչութեան շարքերում։
Բանաստեղծ Մառուրեանը հեգնել է հայ քահանային մանրուքի խանութում մնանկացած։
Ինչպէս տեսնում ենք, հայ վարժապետի իդէալն էլ լինելու է
Ախոռապանութիւնը...

V

Պ. Տէր-Միրաքեանի հառաչանքներով համակվեց ամբողջ դահլիճը.
Անցաւ մի շշուկ.
«Ախ»-ի գոչերով։
Ճառախօս պ. Թորոսեան, սրտապնդված նախորդից, արաւ երկրորդ յայտնութիւնը.
— Հայ ուսուցչին չեն սիրում։
Ժողովը, ի հարկէ, դրա հետ էլ համաձայնվեց.
Բայց սկսեցին փնտռել պատճառները. և գտան՝
Որ «ուսուցչութիւնը փտած դիսկ է»։
Որ ուսուցչութիւնը քսասիր է.
Որ ուսուցչութիւնը ինքը չի սիրում իրան.
Եւ այնքան որ-եր, մինչև պ. Դեմիրճեանն էլ կրկին ամբիօն բարձրացաւ և անհամ ճառը ուզեց համեմել յայտնի գոյնի ֆրազէօլօգիայով, որ հայ ուսուցչութիւնը վարձատրութիւն պահանջեց փախստականների գործում աշխատելու համար և միշտ խուսափում է հասարակական գործերից...
Թէև այդ կարծիքը պաշտպանողներ էլ եղան.
Բայց գտնվեցին նոյնպէս չար լեզուներ,
Որոնք ժողովից դուրս ինձ ասացին.
— Դեկտեմբերեան խուճապին պ. Դեմիրճեանը մինչև Ռոստով մէկ փախաւ. իսկ նրա ախպէր-տղերքը այսօր էլ շարունակում են անկօնտրօլ ծախսել հասարակական գումարները, ստանալով չաղ ռոճիկներ՝ իրանց ցոյց տուած միայն վնասակար գործունէութեան համար։
Սա, անշուշտ, չար լեզուների գործ է.
Մենք, ի հարկէ, նպատակ չունենք վրդովել պ. Դեմիրճեանի ղիւակնային անդորրութիւնը։
Թէ կարծիքներից որը ճշմարտող եղաւ,
Չը կարողացանք ստուգել,
Որովհետև այդ խնդրի առիթով քուէարկութիւն չի եղել։
Այդպէս ասաց մեզ պ. Աղաբաբը,
Որ ընդհ. ժողովների քարտուղարութեան պատէնտ ունի և նստում է անմիջապէս նախագահի աջ կողմը։
Կարելի է և՛ կասկածելի համարել այդ, որովհետև պ. Աղաբաբը, որպէս քարտուղար, անփոյթ է, ասացին։
Ժողովի արձանագրութիւնները մի տարուց իսկ չի ներկայացնում։
Այս անգամ ընտրեցին պայմանով։
Սա, կարծեմ, ժողովի ընթացքում երկրորդ պայմանն էր։

VI

Եղաւ մի պայման ևս...
Որով վարչութեան գործունէութեան քննադատութիւնը արգելվեց։
Ընթերցողը գուշակեց երևի՝
«Ապառիկ անդամավճարով գնվում է քննադատութիւնը»։
Ահա թէ որտեղ էր կրէդիտի զօրութիւնը։
Ով ուզում է քննադատել, թող նաղդ (կանխիկ) վճարի...
Եթէ ուզում է շատ խօսել՝
Հնչուն դրամով։
Այս հանգամանքն ունեցաւ ունկնդիրների համար ևս օգտակար հետևանք.
Խօսելացաւով բռնվածները
Կարճ կապեցին։

VII

Չը նայած ժողովարանի տաղտապը թընդաց,
Բայց տուր ու դմփոց չեղաւ.
Ճիշդն ասած, այդ սպասում էինք.
Վիճում էին ինչ-որ առաջնութեան, աթոռների մասին։

Թէ ով նրանցից աւելի շուտ երկնեց անկենդան ծրագիրներ.

Որոնք թէկուզ մնացել են թղթի վրա։

Բայց երկնելն էլ գործ է,

Եթէ վիժուածք չէ։

Մրցութիւնը շատ կերկարէր, եթէ՝ Ուսուցչ. Միութ. վարչ. նախագահ պ. Երզնկեան բարեհոգութեամբ «փառքի դափնիները» չը զիջէր վարչութեանը կից կազմուած փախստականների որբերին խնամող և փախստական ուսուցիչներին նպաստ բաժանող ուսուցչական կոմիտէի նախագահ թէ գանձապահ պ. Աբովեանին։

Դափնիների վէճն այդպիսով սպառվեց։

Բայց ասացին նոյնպէս, որ փախստական տղայք շրջում են ոտաբոբիկ։

Իսկ այդ ժամանակ հայեացքս ակամայից ընկաւ Տէր-Միրաքեանի մօտ կծկված, Ալաշկերտից փախած, երկու անգամ թալանի ենթարկված և սիրասուն զաւակը հիւանդութեան զոհ տուած ուսուցիչ Վաղարշակ Տէր-Մինասեանի վրա,

Որի թէ ստամոքսը և թէ ուղեղը, կարծեմ, չը կարողացան հաշտվել առաջնութեան վէճերի հետ։

Փախստականների մասին ուժգին ճառեցին,

Բայց փախստական ուսուցչին ոչ ոք չը նկատեց.

Որովհետև 60 րուբլանոց կոստիւմ չունէր հագին,

Երեսն էլ սափրած չէր,

Թէև նստած էր ժողովականների դիմաց,

Դռան մօտ,

Տէր-Միրաքեանի կողքին կծկված։

VIII

Ուսուցչական Միութեան ընդհանուր ժողովն այնքան էլ չերկարեց.

Տևեց ընդամենը 3 ժամ։

Անցեալներում 3—4 օր առաւօտեան և երեկոյեան նիստերով.

Այս անգամ միայն մէկ նիստ։

Խնդրեմ չը մոռանալ կրեդիտը...

Եւ ի նկատի ունենալ, որ գաւառական ուսուցչութիւնը չը կար...

Թէև վիվիսկան կրում է՝

«Կովկասի հայ վարժապետ-վարժապետուհիների Միութիւն»։

Իրօք այդպիսին նա չի եղել երբէք։

Գաւառական ուսուցչութիւնը չի սիրում Միութիւնը.

Պատճառները, պարզեց պ. Մելոյեան.

— Ուսուցչական Միութիւնը Թիֆլիսի վարժապետների մօնօպօլիան է։ Գաւառական ուսուցչութեան շահերին նա չի ծառայել և չի ծառայի...

Հազիւ թէ կարենայ իր ներքին ախտերը մաքրել։

Թէև նախագահը ուզեց հարթել...

Բայց պ. Մելոյեանը արաւ նոր մերկացումներ անցեալից։

Այսպէս, օրինակ, Միութիւնը բօյկոտ յայտարարեց Յովնանեան դպրոցին։

Ո՜վ առաքինութիւն.

Որոշումը կայացնող վարչութեան անդամներից ոմանք խնդիրներ տուին ծածուկ...

Նոր մերկացումներ անելու համար հռետօրը գրպանից հանեց դաւթարը.

Բայց նախագահը զրկեց նրան ձայնից.

Առանց այդ էլ ատմօսֆերան «փտած դիակից» ապականված էր.

Կոմէնտարիաների կարիք չը կար...

Հայ վարժապետը ճաշում է ժամը [illegible] 2-ին, այն ինչ 2-ից անց էր քառորդ։

Ուստի շտապեցին փակել ժ[illegible]

Որոշեցին ընտրել յանձն[illegible] ժողովը.

[illegible] ախումբ հինգ հոգուց բաղկացած։

Տուրին թեւ[illegible] վածու[illegible]

[illegible] ների անունները։

[illegible] րբը անցա[illegible] 20-ից. կարծեմ բոլորն էլ, բացի ինձ[illegible] նից (որովհետև ես ոչ վարժապետ եմ [illegible] և ոչ էլ անդամ), մտան ցուցակի մէ[illegible]

Դարձեալ ստեղծվեց անյարմար դրութիւն։

Որովհետև քուէարկութիւնը կանխօրէն որոշված էր գաղտնի չանել,

Թեկնածուները բարւոք համարեցին մէկ-մէկ հրաժարվել։

Ոմանք վճռական, ոմանք երերուն...

Այսպէս որ պ. նախագահը ստիպված եղաւ նկատել պ. Մուշեղեանին, թէ վերջինս շատ կամաց է ասում։

Ջնջումներից յետոյ մնացին 3 հոգի, պ. պ. Էդիլեան, Ջամալեան և Դէմիրճեան, վերջինս համաձայնվեց քուէարկվել, թէկուզ սևացնեն իրան.

Իսկ ժողովը չը սևացրեց,

Որովհետև չը քուէարկեց.

Բայց պ. Ջամալեան սպառնաց հրաժարվել, եթէ չը գտնեն երկու անդամ ևս։

Այն ժամանակ արին կօօպտացիա ընդհանուր ժողովի և վարչութեան նախագահներից։

Լիազօրեցին յանձնախմբին գտնել մի հեղուկ, սանտաօդէնից գերազանց, որ ներարկելով «փտած դիակին»՝ կենդանացնեն նրան։

Գիւտը անելու համար տուին երկու շաբաթ ժամանակ՝ ժողովին զեկուցելու։

Անաջողութեան դէպքում՝

Պ. Էդիլեան՝ կը փորէ գերեզմանը. պ. Ջամալեան՝ կը կարէ պատանը. պ. Դէմիրճեան՝ կը տաշէ քարը։

Ժողովին էլ ներկայ եղող հրաժարված թեմական տեսուչ, այժմս էլ բանաստեղծութիւններ գրող Հայկունուն, որպէս պատիւ, յանձնարարեցին կազմել տապանագիրը...

Տուրիստ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ԹԻՖԼԻՍ, Ղարիբանցին.—Ձեզ յանձնելու համար՝ Բագուից հեռագիր է ստացված խմբագրութեան հասցէով։ Մտէք խմբագրատուն և ստացէք։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3 դէպի Բաթում 1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4 » Բագու 7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ) » 12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9 » Բաթում 8 ժ. 53 ր. երեկ.
» Ջուլֆա 8 ժ. 53 ր. երեկ.
» Բօրժօմ 3 ժ. 20 ր. ցերեկ

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3 Բագուից — 12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4 Բաթումից— 5 ժ. 55 ր. երեկ.
№ 5 Բագուից (արագ) 7 ժ. 41 ր. երեկ.
№ 10 Բաթումից— 9 ժ. 51 ր. առաւ.
Ջուլֆայից — 8 ժ. 11 ր. առաւ.
Բօրժօմից — 7 ժ. 25 ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Գուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՄԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի կոկորդի և քթի հիւանդութ.։
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՕԶԵԱՆ—12—1 ժ. երեքշ., հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—206

ԲԺԻՇԿ
Ի. ԵԱ. ԳՕԿԻԷԼՕՎ
(Նախկին օրդինատոր Կալինկինեան հիւանդ. Պետրօգրադում)
Ընդունում է հիւանդներին վեներական, սիֆիլիս, կաշուի եւ ջղային հիւանդութիւններից.
Ամեն օր՝ առ. ժամը 9½—12.
եր. » 5—7½.
Հասցէն՝ Միխայլօվսկի պր. № 113.
(օ. մ.) 801. 12—10

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺՇԿ. ՖԷԼԴՇԷՐ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Բժիշկների որոշմամբ՝ սրսկումներ, մասսաժ ձեռքով և էլեկտրականութեամբ. հիմնաւոր բժշկութիւն **սուր եւ խրօնիքական տրիպէրի**, փափուկ ու կոշտ շանկրի, **սեռական թուլութեան եւ անկարողութեան բժշկութիւն** նորագոյն դեղերով բժշկական-առողջապահական խորհուրդներ։ Եկւոր օտար քաղաքացի հիւանդներին առաջնորդում եմ մասնագէտ հմուտ բժիշկների մօտ և ըստ ցանկութեան՝ ինձ մօտ կազմակերպում եմ կօնսիլիում (բժշկ. խորհրդակցութիւն)։ Օտարերկրացիներին ուղարկում եմ խորհուրդներ և բէցէպտներ 3 րուբլի վճարով։ Գաղթականներին ու չքաւորներին խորհուրդը ձրի՝ ինձ մօտ։ Ընդունելութիւնը ամեն օր 3—4 ժամը։ Հասցէս՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г. ЕСАЯНЦУ.
Ինձ մօտ ծախվում են իմ կազմած 1) **«Վեներական ախտերի բժշկարան»** բազմաթիւ խորհուրդներով ու բէցէպտներով, գ. 1 րուբ. 2) **«Փորձանքների բժշկարան»**, անհրաժեշտ ամեն մի ընտանիքի, գ. 50 կ., 3) **«Ծիծաղի սկիզբ»**՝ անեկդոտներ՝ գ. 20 կ., 4) **«Կնիկարմատի սարքը»**, ծիծաղաշարժ վօդևիլ, գ. 20 կ., 5) **«Բաճճի»**, գ. 10 կ., և ճանապարհի ծախս 20 կոպէկ։
(հ. կ.) 311. 100—58

ՄԻՍԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
ՖԱԼԱԿԵԱՆՑԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ
(Խուտօր ՌՕՄԱՆՕՎՍԿԻ, Կուբ. շրջ., Կավկազսկայա կայարանի մօտ)
յայտնում է ի գիտութիւն բոլոր հացավաճառների, որ Կուրգաննայա կայարանում կապալով վերցված ջրաղացը նոյեմբերի 6-ից դարձել է իր սեփականը և ներկայիս վերանորոգված է՝ աւելացնելով ամենավերջին տեսակի մեքենաներ ամենաընտիր ալիւր պատրաստելու համար։ Գրասենեակը միենոյն ժամանակ յայտնում է, որ թէ Կուրգաննայա կայարանի և թէ Կավկազսկայա կայարանի ջրաղացներում մշտական լինում է ալիւր ամեն տեսակի, այն է՝ կրուպչատկա, սէանկա և բազմոլ, սակայն ստանալու համար անհրաժեշտ է կանխապէս ստանալ „Наряды для отправки муки со ст. Курганной (Арм.-Туап. ж. д.) и со ст. Кавказской (Владк. ж. д.)».
Բոլոր պատուէրների համար դիմել Կենտրոնական Գրասենեակը՝
Хут.-Романовскій (Куб. обл.) М. А. Фалакянцу).
(հ.) 796. 4—4

ПРИ ГОНОРРЕѢ
въ острой и хронической формѣ, а также ея послѣдствіяхъ съ громаднымъ успѣхомъ примѣняется испытанный въ теченіе долгихъ лѣтъ препаратъ
„АРМАТИНЪ" А. Я. АКУЛІАНЦА
для внутренняго употребленія. „Арматинъ" совершенно безвреденъ для организма и одинаково успѣшно примѣнимъ къ мужчинамъ и женщинамъ. При употребленіи „Арматина" не требуется никакихъ спринцеваній, промываній, прижиганій, бужированій и т. п.
ПРЕДОСТЕРЕЖЕНІЕ. „Арматинъ" А. Я. Акуліанца вызвалъ на рынкѣ разнаго рода грубыхъ и вредныхъ для организма поддѣлокъ, а потому просятъ г.г. покупателей быть особенно осторожными при покупкѣ и требовать „Арматинъ" только А. Я. Акуліанца съ этикетомъ бѣлая ромашка. Цѣна 1 кор. 1 р. 75 к. Продажа въ аптекахъ по рец. вр. Аптекамъ, аптек. складамъ, лечебницамъ и пр. лечебн. учрежд.—скидка на главн. складѣ А. Я. АКУЛІАНЦА. Москва, Уланскій п. 21.
174. 0—70 (հ. կ.)

КАТАРРЪ ЖЕЛУДКА
ГЕМОРРОЙ
ЗАПОРЪ
ИЗЛѢЧИВАЕТЪ РАДИКАЛЬНО, ИСКЛЮЧИТЕЛЬНО
Пилюли „КАТАГЕМО"
М·ДЕЛАМУРЕ
ПРОДАЖА ВЪ ЛУЧШИХЪ АПТЕКАХЪ И ВЪ АПТЕКАРСКИХЪ СКЛАДАХЪ.
ИСКЛЮЧИТЕЛЬНЫЙ СКЛАДЪ ДЛЯ ВСЕГО КАВКАЗА
ЛАБОРАТОРІЯ М·ДЕЛАМУРЕ ТИФЛИСЪ
ЭРИВАНСКАЯ ПЛ. ПУШКИНСКАЯ 3,
ВЕРХНІЙ ЭТАЖЪ
760. 50—10 (հ. 2)

Մայկոպի մօտ ծխախոտի տնկարանում ապրող մի թիւրքահայ ընտանիքի երկու փոքրահասակ (3 և 5 տ.) երեխաների համար հարկաւոր է
ՀԱՅ ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻ
տանտիկնոջը օգնական։
Պայմանների մասին դիմել՝ Майкопъ (Куб. обл.) Свящ. Вагану Аскарьянцъ.
850. 3—2

Նպաստամատոյց Ընկերութեան գրասենեակում վաճառվում են
ՅՕԳՈՒՏ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ

Линчъ—Арменія շքեղ հր. 2 հատ. գ. 18 ր. 1906 և 1909 թ.թ. Գեղունի, շքեղ հրատ. իւրաքանչիւրի գինն է	3 ր.
Բժ. Վ. Արծրունի—Պատրանք, վէպ.	1 ր.
» Մատնիչ, պատմուածք	40 կ.
Շիրվանզադէ—Ցաւագարը եւ ջնուղի ականջը, պատմուածքներ (հեղինակի կենսագրութեամբ և պատկերով)։	50 կ.
» Ժողովածու երկերի I, II, III, և IV հատոր ամեն մինի գինն է	1 ր. 50 կ.
М. Алавердянъ—Идеологи освобожденія турецкихъ армянъ	40 կ.
Ив. Гнуни—Мотивы армянской поэзіи	40 կ.
Ив. Саркисянъ—Армянск. литература	60 կ.
Վարդան Թամալեան—Հայաչանք (երկրորդ տպագրութիւն)	30 կ.
Բ. Իշխանեան—Գերմանիայի եւ Թիւրքիայի տնտեսա-քաղաք. փոխ-յարաբերութիւնները	25 կ.
Նապօլէօնական պատկերներ հատը	50 կ.
Գր. ա.-ք. Մանդակունի—Հանրամատչելի բժշկարան (բժշկապետ Րէատէնի բժշկարանից կազմած)։	1 ր.
Ս. Դանիէլ-Բէկ—Կանանց հարցը	20 կ.
Ա. Քիշմիշեան—Վարդավառ, պր. 2 արարուածով.	20 կ.
Զարգաշ—Զատկական զառներ	10 կ.
Ա. Աթայեան—Սիրոյ հովիտը	3 կ.

Յիշեալ բոլոր հրատարակութիւնները միասին պահանջողներին կը լինի զեղչ 25%։ Մինչև 1 րուբլի գումարի գրքերի ճանապարհածախսը Ընկ. վրա։
Դիմել՝ Тифлисъ, Обществу Вспомоществованія на случай бѣдствій «НПАСТАМАТУЙЦЪ» (Соломоновская, 21).
(օ. մ.) 244. 15—10

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԻՆԺԵՆԵՐ
Տ. Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ
Բագու, Կրասնովօդսկայա փ. տ. Ասան-Իսզբաշեանցի։ Հեռախօս № № 23-49, 23-50
Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար իսկապէս ԴԻԶԵԼ շարժիչներ (մօտօրներ) յայտնի ԿՕԼՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։
Հօրիզօնական անգլիական շարժիչներ, (մօտօրներ) «ԿՐՕՍԼԷՅ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի ուժին ½ ֆունտ կամ 200 գրամ։
Գազային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գեներատորային գազով։
Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասօսներ)։
Ջրի շարժիչներ (տուրբինաներ)։
Սառոյց պատրաստող մեքենաներ «Ֆէնիքս» ընկ. գործարանից։
Ամեն տեսակ էլեքտրական մեքենաներ և պիտոյքներ յայտնի «Դինամօ» ընկ. գործարանից։
Երկրագործական մեքենաներ՝ լօկօմօբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրակտօրներ և այլն՝ յայտնի ամենայն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկեր. գործարանից։
Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։
Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարաններ սարքել և գործի գցել իր միջոցներով՝ ինժեներներով և վարպետներով։
Դիմել՝ Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.
Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur.
(հ.կ.) 551. 150—150

БИЧЪ ЧЕЛОВѢЧЕСТВА ПОБѢЖДЕНЪ.
На леченіе хроническаго триппера нужно потерять только 50 минутъ и Вы избавитесь разъ навсегда отъ этого недуга который Васъ мучилъ несколько лѣтъ, подтачивалъ Ваше здоровье, разрушалъ Вашъ организмъ и укорачивалъ Вашу жизнь.
ДАРОВОЙ РЕЦЕПТЪ.
Нужно взять только 2 двойныхъ флакона „рапидъ" и коробку пилюль разрѣшен. медиц. совѣтомъ за № 1295 и ежедневно теряя на леченіе только двѣ минуты въ теченіе трехъ недѣль будете совершенно здоровы. Въ теченіе пяти лѣтъ изобрѣтенный мною средство „рапидъ" излечило десятки тысячъ больныхъ и успѣло заслужить громкую извѣстность по всей россіи и даже заграницей.
Кромѣ того, преимущество моего предложенія заключается въ томъ, что Вы матеріально не рискуете, такъ какъ, если не излечитесь, то по полученіи отъ Васъ анализа мочи, указывающ., что болѣзнь не излечена, я немедленно возвращу Вамъ деньги, затраченныя на покупку моего лекарства.
Такая увѣренность въ благопріятномъ дѣйствіи моего препарата „рапидъ" основана на четырехлѣтнемъ съ нимъ опытѣ.
За это время тысячи больныхъ пользовались „рапидомъ," и результатомъ пользованія во всѣхъ случаяхъ было полное излеченіе, на что у меня имѣются доказательства въ видѣ очень многочисленныхъ благодарностей-писемъ. Такіе результаты говорятъ сами за себя и даютъ мнѣ полное право смѣло заявить что случаевъ неизлеченія препаратомъ „рапидъ" нѣтъ, и каждый больной, употребившій два двойныхъ флакона препарата „рапидъ" безусловно излечивается, какъ бы болѣзнь долго ни продолжалась.
Обращаю вниманіе больныхъ на то обстоятельство, что моя увѣренность въ средствѣ „рапидъ" и мое обѣщаніе не голословны, въ подтвержденіе чего каждому выписавшему отъ меня 2 двойныхъ флакона препарата „рапидъ," я вмѣстѣ съ лекарствомъ высылаю обязательство о возвратѣ денегъ въ случаѣ неизлеченія.
Цѣна за два двойныхъ флакона (полный курсъ леченія) и коробка пилюль 9 руб. Наложен. плат. и съ пересылкой 10 р. Нал. платеж. высылается только по полученіи 3 руб. задатка.
Заказы и требованія адресовать исключительно въ Кавказское отдѣленіе Московской Лабораторіи, М. Деламуре, Тифлисъ, Эриванск. пл. Пушкинская 3, отд. 6, М. верхный этажъ.
609. 50—12 (հ.)

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.